ԸՌԱՅՎԱՆ, Ա. բ., պ. ռէհվար, սրընթաց (ձի):

ԸՌԱՆԱՅ, մ. հ., պ. րանա, գեղեցիկ:

ԸՌԱՍՏ (գալ). Ա. բ., թ. րաստ (կէլմէք). հանդիպիլ:

ԸՌԱՉԱԿ, Ա. բ. , ինչք, հարստութիւն:

ԸՌԸՆՏՈՒԹԻՒՆ, մ. հ., գեղեցկութիւն:

ԸՌՆՏՑՆԵԼ, Ա. բ., բժշկել:

ԸՌՈՒՊ, տես & ռուպի, պ. րուպի, պարսկական եւ հնդկական դրամ մը:

ԸՍՕՐ, Ա. բ., այսօր:

## Թ.

ԹԱԹԱՒ, մ. հ., անձրեւ, մանտր ու մեծ թաթաւն ի վերայ:

ԹԱԼԵԹԼԻԼ, մ. հ. տապլտկիլ, թաւալտկիլ:

ԹԱԼՈՒԿ, մ. հ., մարմրուք, նուաղում:

ԹԱԼՑԵՐ, մ. հ., նուաղեր, մարեր:

ԹԱՊԵԼ (տալ), տես թափալ, մ. հ., ոտքով հրել, գլորել, թաւալեցնել, ոտօքս ալ թապալ տուի:

ԹԱՊԻՅ, պ. թապի, լոյս, պայծառութիւն. Արեգակն ու լուսին որ կ'ելլեն ի մէկ թապիհէ, միեւնոյն լոյսի աղբիւրէն ?, կամ թերեւս՝ եթէ միեւնոյն րոպէին ծագին:

ԹԱՊԼԻԼ, Ա. բ. , թաւալիլ, թապլտկիլ:

ԹԱՊՏԻՐ, ա. թէտպիր, կարգադրութիւն:

ԹԱՐԿ, ԹԱՐԿԻԿ, ա. թէրք, թողուլ, լքել, հրաժարիլ, տւեր զարեւուն ըզթարկն, կեանքէն ձեռք է քաշել, թարկն չեմ ի տար, չեմ լքեր:

ԹԱՐԿԵԼ, մ. հ., (թէրք բառէն), լքել. Ա. բ. թարկել, թողուլ, լքանել (տես Ճանիկեան):

ԹԱՒԱՔԱԼԻ, թ. թէվեքքիւլլիս, յոյսը Աստուծոյ վրայ դրած մարդ, համակերպող մարդ:

ԹԱՒՈՒԹ, ԹԱՊՈՒԹ, պ. թապութ, դագաղ:

ԹԱՓԵԼ, տես ԹԱՊԱԼ:

ԹԵՊՈՒՐ, ԹԵՊՐԻԿ, մ. հ., փետուր, փետրիկ:

ԹԵՐԸՆՄԱԾ, մ. հ., կէս մաշած:

ԹԷՉ, թ. թիզ, շուտ:

ԹԷՐԱՉՈՒ, պ. կշիռք:

ԹԷՍՏԷ, փունջ, պ. տէսթէ:

ԹԷՓՍԻ, թ. ափսէ:

ԹԻՒԹԻԱ, ԹՈՒԹԻԱ, պ. թութեա, աչքի դեղ, collyre:

ԹԻՒԼՊԷՆՏԷ, պ. եւ թ. տիւլպէնտ կամ թիւլպէնտ, mousseline, բեհեզ, մարմաշ: